Արձանագրություն 2

ՍՆ-ԷԱՃԱՊՁԲ-18 ծածկագրով ընթացակարգի

բացման նիստի

ք. Երևան	5-ը դեկտեմբերի 2018թ. ժամը 11:30 Վազգեն Սարգսյան 3, ՀՀ սփյուռքի նախարարություն 7-րդ հարկ, N701 սենյակ

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Լիանա Սիմոնյան
Հանձնաժողովի անդամներ՝	Հայկ Հովսեփյան Հայկ Ենգիբարյան Հասմիկ Սերոբյան Ալմաստ Ադամյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Կարինե Ազիզյան

ՍՆ-ԷԱՃԱՊՁԲ-18 ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.

Լիանա Սիմոնյան

2018թ. Դեկտեմբերի 22-ին հրավեր է ուղարկվել www.e-action.armeps.am **համակարգի միջոցով հնարավոր բոլոր մասնակիցներին՝**

1. **Աճուրդը սկսվել է** www.e-action.armeps.am **համակարգի միջոցով 2018թ. Դեկտեմբերի 5-ին, ժամը 10:30 -ին:**

1.1. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը
«ՖԼԵԾ» ՍՊԸ
«Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ

1.2 Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

1.2.1 ««ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.2.2 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.3 Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

1.3. 1 «ՖԼԵԾ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված յուրաքանչյուր հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը

1.3. 2 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ –ի կողմից ներկայացված յուրաքանչյուր հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը

1.4 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

1.4.1 «ՖԼԵԾ» ՍՊԸ -ի կողմից ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.4.2 «Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ -ի կողմից ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.4.3 **Նախահաշվային գին.***

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱ	Չափման միավոր	Միավորի գին	Քանակ	Ընդամենը գին
բենզին պրեմիում	լիտր	450	500	225000

1.5 Մասնակցի առաջարկած գինը՝

Հ/Բ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱ	Գնային առաջարկ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	
		ՖԼԵԾ ՍՊԸ	ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ ՍՊԸ
1	**բենզին պրեմիում**	187500	189583.34

1.6 Գնահատող հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները քննարկեց և որոշեց.

1.6.1 Մերժել «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ին նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:
1.6.2 Առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչել ՖԼԵԾ ՍՊԸ-ին:
1.6.3 Գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում հարցումն ուղարկվում Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 8-րդ

հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Կոմիտեն հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին համապատասխան տեղեկատվություն: Սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

1.6.4 Գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

1.6.5 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա վերոնշյալ հարցման վերաբերյալ եզրակացության ստացման օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լիանա Սիմոնյան - Սփյուռքի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ.

Անդամներ՝

Հայկ Հովսեփյան - Սփյուռքի նախարարության ֆինանսատնտեսական վարչության պետ.

Հայկ Ենգիբարյան - Սփյուռքի նախարարության համահայկական ծրագրերի վարչության գիտակրթական ծրագրերի բաժնի պետ

Հասմիկ Սերոբյան - Սփյուռքի նախարարության իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ.

Ալմաստ Ադամյան - Սփյուռքի նախարարության ֆինանսատնտեսական վարչության առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Սփյուռքի նախարարության ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ - Կարինե Ազիզյան